

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի
Մետրոպոլիտեն» Փակ
Բաժնետիրական Ընկերություն

2013թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրակթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ -ի բաժնետիրոջը

Մեր կողմից իրականացվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ -ի (Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը

մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Առաջնությունը աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան առաջնության ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:


Կարծիք

Մեր կարծիքով՝ ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ -ի՝ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Այլ հանգամանքներ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ -ի 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները առաջին անգամ են ենթարկվել այլ առաջնության կողմից, որը 2013թ. մարտի 1-ին վերապահումով կարծիք է արտահայտել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ կապված կապակցված կողմերի և դրանց հետ գործարքների բացահայտման անկարողության, ինչպես նաև աշխատողների չօգտագործված արձակուրդային օրերի գծով պարտավորության և լրացուցիչ հարկային պարտավորության հաշվեգրման հետ:

2014թ. հունիսի 26



Լիլիթ Արաբաջյան, FCCA

Սուաջադրանքի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)	2012թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկա- յացված)
	Ծանոթ.			
Ակտիվներ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	14,766,821	12,948,464	11,213,405
Ոչ նյութական ակտիվներ		76	177	278
Նվազագույն շահութահարկի վճարներ Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ծեռքերման համար		34,054	28,714	23,871
		-	227,721	-
		<u>14,800,951</u>	<u>13,205,076</u>	<u>11,237,554</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	5	817,100	377,154	228,075
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	228,371	232,094	308,170
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	304,566	40,328	7,341
		<u>1,350,037</u>	<u>649,576</u>	<u>543,586</u>
Ընդամենը ակտիվներ		<u><u>16,150,988</u></u>	<u><u>13,854,652</u></u>	<u><u>11,781,140</u></u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
<i>Կապիտալ և պահուստներ</i>	8			
Բաժնետիրական կապիտալ		4,202,243	4,202,243	4,202,243
Կուտակված վնաս		(1,634,539)	(993,115)	(654,718)
		<u>2,567,704</u>	<u>3,209,128</u>	<u>3,547,525</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր	9	6,660,899	4,533,042	3,398,209
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	4,620,995	4,388,572	3,224,801
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	442,206	265,821	195,389
		<u>11,724,100</u>	<u>9,187,435</u>	<u>6,818,399</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր	9	233,142	221,766	274,626
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	432,871	278,174	292,214
Պահուստներ	13	1,193,171	958,149	848,376
		<u>1,859,184</u>	<u>1,458,089</u>	<u>1,415,216</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u><u>16,150,988</u></u>	<u><u>13,854,652</u></u>	<u><u>11,781,140</u></u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2014թ. հունիսի 26-ին՝

Փայլակ Յուրյան
 Գործադիր տնօրեն

Գայանե Առաքելյան
 Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների
 բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2013թ.	2012թ.
		դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Հասույթ	14	1,403,411	1,333,420
Պետական աջակցություն	15	2,306,188	1,904,241
Վաճառքի ինքնարժեք	16	(3,501,833)	(2,877,148)
Համախառն շահույթ		207,766	360,513
Այլ եկամուտ	17	269,951	257,933
Վարչական ծախսեր	18	(294,199)	(264,724)
Այլ ծախսեր	19	(292,063)	(248,908)
Գործառնական գործունեությունից արդյունք		(108,545)	104,814
Ֆինանսական ծախսեր, զուտ	20	(80,239)	(118,730)
Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	21	(276,255)	(254,049)
Վնաս մինչև հարկերը		(465,039)	(267,965)
Շահութահարկի գծով ծախս	22	(176,385)	(70,432)
Տարվա վնաս		(641,424)	(338,397)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(641,424)	(338,397)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	4,202,243	(704,077)	3,498,166
Նախորդ տարիների էական սխալների ուղղում	-	49,359	49,359
2012թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված)	4,202,243	(654,718)	3,547,525
Տարվա վնաս	-	(338,397)	(338,397)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(338,397)	(338,397)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	4,202,243	(993,115)	3,209,128
Տարվա վնաս	-	(641,424)	(641,424)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(641,424)	(641,424)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,202,243	(1,634,539)	2,567,704

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(641,424)	(338,397)
<i>Եզրտումներ`</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	848,267	581,145
Հիմնական միջոցների օտարումից վնաս	7	78,464
Տոկոսային ծախս	80,310	118,778
Ֆինանսական եկամուտ	(71)	(48)
Շահութահարկի զծով ծախս	176,385	70,432
Փոխարժեքային տարբերությունից վնաս	276,255	254,049
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>739,729</u>	<u>764,423</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	4,123	79,739
Պաշարների փոփոխություն	130,128	(149,079)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	154,891	(14,103)
Պահուստների փոփոխություն	235,022	109,773
Ակտիվներին վերաբերող շնորհի փոփոխություն	(265,597)	1,488
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<u>998,296</u>	<u>792,241</u>
Վճարված տոկոսներ	(80,310)	(118,778)
Վճարված շահութահարկ	(5,340)	(4,843)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>912,646</u>	<u>668,620</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(422,561)	(241,385)
Տրված կանխավճարներ	-	(227,721)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	21,000
Ստացված ֆինանսական եկամուտ	71	48
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(422,490)</u>	<u>(448,058)</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	-	1,690,295
Վարկերի և փոխառությունների մարում	(225,699)	(1,877,903)
<i>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(225,699)</u>	<u>(187,608)</u>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	264,457	32,954
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(219)	33
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	40,328	7,341
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	<u>304,566</u>	<u>40,328</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է 2001թ. մայիսի 24-ին Հայաստանի Հանրապետության («ՀՀ») օրենսդրությանը համապատասխան՝ Երևանի քաղաքապետարանի կողմից և հանդիսանում է «Երևանի Մետրոպոլիտեն» Հատուկ Նշանակության Պետական Ձեռնարկության իրավահաջորդը:

Ընկերությունը կառավարվում է Երևանի քաղաքապետարանի և իր Տնօրենների Խորհրդի կողմից, որը բաղկացած է 5 անդամներից:

Ընկերության 100% բաժնետերն է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, որը ներկայացնում է Երևանի քաղաքապետարանը:

Ընկերության հիմնական գործունեությունը մետրոյով ուղևորների փոխադրումն է: Ընկերության հասույթի աղբյուրներ են հանդիսանում նաև կապի սպասարկման և գովազդի թույլտվությունների տրամադրումը և տարածքների վարձակալությամբ հանձնումը:

Ընկերությունն ունի հետևյալ 10 կայարանները.

- Բարեկամություն;
- Մարշալ Բաղրամյան;
- Երիտասարդական;
- Հանրապետության հրապարակ;
- Չորավար Անդրանիկ;
- Սասունցի Դավիթ;
- Գործարանային;
- Շենգավիթ;
- Չարբախ;
- Գարեգին Նժդեհի հրապարակ:

Ընկերությունը ստանում է աջակցություն Հայաստանի Հանրապետության Կառավարությունից: Այդ գումարներն ուղղվում են Ընկերության կրած վնասների փոխհատուցմանն ու ֆինանսական պարտավորությունների մարմանը: Աջակցությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով:

2010 թվականից ի վեր՝ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել Երևան քաղաքի մետրոյի համակարգի վերակառուցման և մատուցվող ծառայությունների անվտանգության բարձրացման ծրագրի իրականացմանը: Ծրագրի ֆինանսավորման նպատակով կնքվել են մի շարք միջազգային պայմանագրեր: «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցում» 30 միլիոն եվրո ընդհանուր արժողությամբ փաթեթային ծրագիրը բաղկացած է 2 փուլից՝ յուրաքանչյուրը 15 միլիոն եվրո: Առաջին փուլի շրջանակներում

2010 թվականի մարտի 10-ին կնքվել է 15 միլիոն եվրո ընդհանուր արժողությամբ սինդիկացված վարկային համաձայնագիր, որից 5 միլիոն եվրոն՝ որպես դրամաշնորհ, տրամադրել է Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային գործիքը և 5-ական միլիոն եվրոյի չափով վարկեր տրամադրել են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկը (այսուհետ՝ ՎԶԵԲ) և Եվրոպական Ներդրումային բանկը (այսուհետ՝ ԵՆԲ): Միևնույն պայմաններով, ներգրավված գումարներով և նույն կողմերի միջև 2012-2013թվականներին կնքվել են նաև համաձայնագրեր երկրորդ փուլի աշխատանքների իրականացման համար:

Առաջին փուլի աշխատանքները ներառում են՝

- 60 սայլակների փոխարինում և տեխնիկական սպասարկման սայլակի գնում,
- էլեկտրամատակարարման վերականգնում, ներառյալ 6 ԿՎ ընտրված մալուխների և համուղղիչների փոխարինում,
- ջրի ներթափանցման հետ կապված միջոցառումներ, ներառյալ պոմպերի մատակարարում և տեղադրում,
- գծերի բարելավում՝ ներառյալ փայտակոճերի, ռելսերի միջադիրների, ամրանների, փորակավոր ռելսերի, ուղեփոխիչների, եռակցման նյութերի ձեռքբերում,
- տեխնիկական սպասարկման այլ սարքավորումների և գործիքների գնում և դրանց հետ կապված տեղադրման աշխատանքներ:

Ծրագրի առաջին փուլով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ իրականացվել են:

Երկրորդ փուլի աշխատանքները ներառում են՝

- վագոնների վերանորոգում ու արդիականացում,
- թունելների ջրի ներհոսքի խնդրի լուծում,
- թունելների վիճակի բարելավում, տեխնիկական սպասարկելիության բարձրացում և դրանց համար երկարաժամկետ ծառայության ապահովում,
- գծային տնտեսության և անվտանգության լրացուցիչ բարելավում:

Երկրորդ փուլի նախատեսված միջոցառումներից Ընկերությունն իրականացրել է վագոնների վերանորոգման և արդիականացման աշխատանքները:

Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղդամյան 76:

2013թ. ընթացքում Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1,016 (2012թ.՝ 1,117):

Վարչական և գործառնական անձնակազմի միջև բաշխվածությունը ներկայացված է ստորև.

	2013թ.	2012թ.
Վարչական անձնակազմ	105	106
Գործառնական անձնակազմ	911	1,011
	1,016	1,117

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2.2 Ծանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2013թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2013թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»

Փոփոխություններում ներկայացված է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության համար նոր տերմինոլոգիա, որի օգտագործումը պարտադիր չէ: ՀՀՄՍ 1-ի փոփոխությունների համաձայն «համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը» վերանվանվել է «շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն»: ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները չեն բացառում շահույթը կամ վնասը և այլ համապարփակ ֆինանսական արդյունքը մեկ ընդհանուր կամ երկու առանձին, սակայն հաջորդական հաշվետվություններում ներկայացնելու ընտրության հնարավորությունը: Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 1-ի փոփոխություններում պահանջվում է, որպեսզի ընկերությունը խմբավորի այլ համապարփակ արդյունքում արտացոլված հոդվածները երկու կատեգորիաներում. (ա) հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթ կամ վնաս և (բ) հոդվածներ, որոնք հետագայում, երբ բավարարվեն որոշակի պայմաններ, կարող են վերադասակարգվել շահույթ կամ վնաս: Այլ համապարփակ արդյունքի հոդվածներին վերաբերող շահութահարկը պետք է բաշխվի նույն սկզբունքով՝ փոփոխությունները չեն փոխում այլ համապարփակ արդյունքի հոդվածները մինչև հարկումը կամ հարկերից զտված տեսքով ներկայացնելու ընտրության հնարավորությունը: ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները ազդեցություն չունեն շահույթի կամ վնասի, այլ համապարփակ արդյունքի կամ ընդամենը համապարփակ արդյունքի վրա:

ՖՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում»

ՖՀՄՍ 13-ը հստակեցնում է իրական արժեքի սահմանումները և ապահովում է համապատասխան ուղեցույց և մանրամասն բացահայտումներ իրական արժեքի չափումների վերաբերյալ: Ստանդարտը չի առանձնացնում, թե որ միավորները պետք է հաշվառվեն իրական արժեքով: ՖՀՄՍ 13-ի շրջանակներն ընդարձակ են, և այն կիրառելի է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական այն հոդվածների համար, որոնց համար այլ ՖՀՄՍ-ները պահանջում կամ թույլ են տալիս իրական արժեքի չափումներ և իրական արժեքի չափումների վերաբերյալ բացահայտումների կատարում, բացառությամբ որոշ հանգամանքների:

ՖՀՄՍ 13-ը կիրառելի է առաջընթաց՝ 2013թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ստանդարտի կիրառման առաջին տարում պարտադիր չէ բացահայտումներին ներկայացվող պահանջները կիրառել համեմատական տեղեկատվության նկատմամբ:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Գեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ»

ՀՀՄՍԽ-ն մտադրված է ՀՀՄՍ 39-ը՝ «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը», ամբողջությամբ փոխարինել ՖՀՄՍ 9-ով: Առ այսօր թողարկվել են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման, դասակարգման, չափման և ապաճանաչման վերաբերյալ, ինչպես նաև հեջավորման վերաբերյալ գլուխները: Նախկինում նախատեսված էր, որ սույն գլուխները կիրառելի կլինեն 2015թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Այնուամենայնիվ, 2013թ. նոյեմբերին 2015թ. հունվարի 1-ը ՖՀՄՍ 9-ի կիրառման պարտադիր ամսաթիվ լինելու պայմանը հանվել է՝ կազմակերպություններին նոր պահանջներին անցում կատարելու համար բավարար ժամանակ տրամադրելու համար: Արժեզրկման մեթոդոլոգիաների վերաբերյալ գլուխները դեռևս գտնվում են մշակման փուլում: 2013թ. նոյեմբերին ՖՀՄՍ 9-ում կատարված փոփոխությունների արդյունքում թույլատրվում է ՖՀՄՍ 9-ում արդեն իսկ ներառված, այսպես կոչված՝ «սեփական պարտքի» վերաբերյալ դրույթները կիրառել մեկուսացված՝ առանց ֆինանսական գործիքների այլ հաշվառումները փոփոխելու անհրաժեշտության:

Ընկերության դեկավարությունը դեռևս պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Գեկավարությունը չի նախատեսում ՖՀՄՍ 9-ը կիրառել նախքան ստանդարտն ամբողջովին պատրաստ լինի, և հնարավոր լինի գնահատել դրա ընդհանուր ազդեցությունը:

Տարեկան բարեփոխումներ՝ 2010-2012թթ.

2010-2012թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Ընկերությանը վերաբերող փոփոխություններն ամփոփված են ստորև.

ՖՀՄՍ 13. «Իրական արժեքի չափում»

Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

- փոփոխվում են Եզրակացությունների համար հիմքերը՝ պարզաբանելու համար, որ ընկերությունը պարտադրված չէ հաստատված տոկոսադրույք չունեցող կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը զեղչել հաշիվ-ապրանքագրում նշված գումարից ցածր արժեքի, եթե զեղչման ազդեցությունն էական չէ:

ՀՀՍՍ 24. «Կապակցված կողմերի բացահայտումներ»

Առանցքային կառավարչական անձնակազմ

- փոփոխվում է «կապակցված կողմի» սահմանումը, որպեսզի ներառի «կառավարչական ընկերությունները», որոնք հաշվետու ընկերությանը մատուցում են առանցքային կառավարչական անձնակազմի ծառայություններ,
- պահանջվում է, որպեսզի հաշվետու ընկերությունը բացահայտի առանձին կառավարչական ընկերությանը որպես առանցքային կառավարչական անձնակազմի ծառայությունների վճար ճանաչված գումարները,
- տրամադրվում է բացառության իրավունք՝ հաշվետու ընկերությանը թույլ տալով առանձնացված չբացահայտել առանցքային կառավարչական անձնակազմին վճարված փոխհատուցման բաղադրիչները, եթե փոխհատուցումը վճարվել է կառավարչական ընկերության միջոցով:

Վերը ներկայացված 2010-2012թթ. տարեկան բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2014թ. հուլիսի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Գնկավարության կանխատեսմամբ՝ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.6 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ֆինանսական հաշվետվությունները, նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը ներառյալ, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող ուղղման գումարը ճշգրտվում է ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 405.64 ՀՀ դրամ, իսկ 1 եվրոն կազմում է 559.54 ՀՀ դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 403.58 ՀՀ դրամ, իսկ 1 եվրոն կազմում է 532.24 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրսգրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20 - 100 տարի
Փոխանցող հարմարանքներ	- 20 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 8 - 25 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 3 - 20 տարի
Այլ	- 5 - 20 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի հաշվապահական ծրագրի համար:

3.4 Վարձակալված ակտիվներ

Վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալված ակտիվների վրա կատարված կապիտալ ծախսումները ամորտիզացվում են 20 տարում:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել, կամ լրացել է դրանց՝ ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը, և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Ընկերության ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24.2-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» կամ «Փոխարժեքային տարբերություններից շահույթ/(վնաս)» հոդվածներում:

i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրսգրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24.2-ում:

i. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա

փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումն օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով շահույթում կամ վնասում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլինի, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլինեի:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նումինալ արժեքը:

Կուտակված վնասը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված վնասը:

3.9 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռքբերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.12 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթը ստացվում է տրանսպորտային ծառայություններից, կապի ծառայությունների մատուցման թույլտվությունից, վարձակալությունից և գովազդի տեղադրման թույլտվությունից:

Տրանսպորտային ծառայությունների մատուցումից հասույթ

Տրանսպորտային ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է շահույթի կամ վնասի հաշվետվությունում, երբ իրականացվում է ժետոնների վաճառքը:

Կապի ծառայությունների մատուցման թույլտվությունից հասույթ

Կապի ծառայությունների մատուցման թույլտվությունից հասույթը ներառում է Ընկերության տարածքում կապի ծառայություններ մատուցելու թույլտվության տրամադրումից և այդ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ սարքավորումների տեղադրման և դրանց հետագա սպասարկման ապահովումից եկամուտը: Եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ համապատասխան պայմանագրի ժամկետի ընթացքում:

Վարձակալական եկամուտ

Գործառնական վարձակալությունից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ համապատասխան վարձակալական պայմանագրի ժամկետի ընթացքում:

Գովազդի տեղադրումից եկամուտ

Գովազդի տեղադրման թույլտվությունից եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ համապատասխան գովազդի տեղադրման ծառայության պայմանագրի ժամկետի ընթացքում:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը գեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հողեր, շենքեր և շինություններ	Փոխանցող հարմարանք- ներ	Տրանսպոր- տային միջոցներ	Սեբենա- սարքավորու- մներ, տնտեսական գույք և այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	6,573,520	1,305,715	5,296,428	1,607,627	14,783,290
Ավելացում	109,053	552,390	1,545,860	208,264	2,415,567
Օտարում	-	(30,598)	(190,402)	(21,026)	(242,026)
Ներքին շարժ	-	(312,538)	-	312,538	-
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,682,573	1,514,969	6,651,886	2,107,403	16,956,831
Ավելացում	333,649	3,929	1,535,137	793,815	2,666,530
Օտարում	(66)	-	-	(13,093)	(13,159)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,016,156	1,518,898	8,187,023	2,888,125	19,610,202
<i>Կուտակված մաշվածություն</i>					
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	1,648,805	176,550	683,381	1,061,149	3,569,885
Տարվա հաշվարկ Օտարման հետևանքով դուրսգրում	82,437	53,589	307,422	137,596	581,044
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(16,475)	(105,110)	(20,977)	(142,562)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,731,242	213,664	885,693	1,177,768	4,008,367
Տարվա հաշվարկ Օտարման հետևանքով դուրսգրում	86,187	132,291	417,924	211,764	848,166
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(66)	-	-	(13,086)	(13,152)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,817,363	345,955	1,303,617	1,376,446	4,843,381
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,951,331	1,301,305	5,766,193	929,635	12,948,464
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,198,793	1,172,943	6,883,406	1,511,679	14,766,821

«Հողեր, շենքեր և շինություններ»-ը ներառում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստացված 511,009 հազար դրամ գումարով հողատարածքներ, որոնք հաշվառվում են ճանաչման օրվա դրությամբ հողի կադաստրային և իրական արժեքների տարբերությամբ:

Հիմնական միջոցների էական ավելացումները ներառում են կապիտալ վերանորոգումներ՝ կատարված վագոնների՝ 1,535,137 հազար դրամ (2012թ.՝ 1,455,935 հազար դրամ), շարժասանդուղքների՝ 208,280 հազար դրամ (2012թ.՝ 159,908 հազար դրամ) և թունելների վրա՝ 81,221 հազար դրամ (2012թ.՝ 68,909 հազար դրամ): Վերանորոգումները ֆինանսավորվել են «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցում» ծրագրի շրջանակներում (տե՛ս ծանոթագրություն 1):

Հիմնական միջոցների ավելացումների որոշ մասը ֆինանսավորվում է Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային գործիքից ստացված դրամաշնորհի և Հայաստանի Հանրապետության կառավարությունից ստացված սուբսիդիաների հաշվին:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 84,975 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 75,600 հազար դրամ) դեռ շահագործման հանձնված չեն:

Ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 539,931 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 640,390 հազար դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ինքնարժեք	837,132	572,656
Վարչական ծախսեր	11,034	8,388
	<u>848,166</u>	<u>581,044</u>

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,589,671 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,519,863 հազար դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող թունելներ և ստորգետնյա կառույցներ ներառված են շենքերի և շինությունների դասի մեջ: Այդ հիմնական միջոցների համար Ընկերությունը ձեռք չի բերել սեփականությունը հաստատող որևէ փաստաթուղթ: Այնուամենայնիվ, այդ հիմնական միջոցները ճանաչվել են Ընկերության ֆինանսական հաշվետվությունում, քանի որ բավարարում են ակտիվի ճանաչման պայմաններին:

Ընկերության ադմինիստրատիվ անձնակազմը օգտագործում է Երևանի քաղաքապետարանին պատկանող շենքը: Ընկերությունն օգտվում է շենքից՝ համաձայն անհատույց օգտագործման պայմանագրի: Ընթացիկ տարում Ընկերությունն իրականացրել է 8,910 հազար դրամի կապիտալ վերանորոգումներ վարչական շենքի վրա (2012թ.՝ 7,620 հազար դրամ):

«Երևանի մետրոպոլիտենի վերակառուցում» ծրագրի շրջանակներում ՀՀ Կառավարության և միջազգային բանկերի միջև կնքված վարկային համաձայնագրերի պայմաններով նախատեսվում է, որ Ընկերությունը չպետք է վաճառի, փոխանցի, վարձակալությամբ տա և այլ կերպ օտարի շահագործվող ակտիվներն ամբողջությամբ կամ դրա զգալի մասը, որոնք կարևոր են Ընկերության հիմնական գործունեության բնականոն ընթացքի համար:

5 Պաշարներ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահեստամասեր և նյութեր	804,492	364,287
Այլ	12,608	12,867
	<u>817,100</u>	<u>377,154</u>

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	21,177	13,460
Տրված կանխավճարներ	2,539	17,700
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեից	204,655	200,934
	<u>228,371</u>	<u>232,094</u>

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ընկերությունը չունի ուղևորավճարների գծով դեբիտորական պարտքեր: Բոլոր գործարքներն իրականացվում են կանխիկով: Առևտրային դեբիտորական պարտքերը գոյանում են վարձակալական և այլ ծառայությունների մատուցումից:

Ղեկավարության համոզմամբ՝ դեբիտորական պարտքերը պարտքային ռիսկ չեն պարունակում, այդ իսկ պատճառով Ընկերությունը չի ստեղծում պահուստ դրանց գծով:

Պետական բյուջեից դեբիտորական պարտքերը ներառում են հաշվանցման ենթակա ԱԱՀ 203,925 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 200,890 հազար դրամ), որից 10,958 հազար դրամ գումարը կդառնա հաշվանցման ենթակա համապատասխան հաշիվ-ապրանքագրերի դիմաց վճարումը կատարելուց հետո:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Առևտրային դեբիտորական պարտքերն արտահայտված են հայկական դրամով:

7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	10,582	14,571
Բանկային հաշիվներ	293,984	25,757
	<u>304,566</u>	<u>40,328</u>

8 Կապիտալ և պահուստներ

8.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2013թ.	Սովորական բաժնետոմսեր 2012թ.
Հայտարարված բաժնետոմսեր		
Սովորական բաժնետոմսերի քանակը՝ յուրաքանչյուրը 400,328 դրամ	<u>10,497</u>	<u>10,497</u>

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

«Երևանի մետրոպոլիտենի վերակառուցում» ծրագրի շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի դրույթների համաձայն՝ մինչև ծրագրի ավարտը Ընկերության բաժնետեր Երևանի քաղաքապետարանը պետք է պահպանի բաժնետոմսերի նկատմամբ նվազագույնը 51%-ի սեփականության իրավունքը:

9 Վարկեր

Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ընկերության միջև կնքվել են ենթավարկային պայմանագրեր «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման» ծրագրի ֆինանսավորման նպատակով: Ենթավարկային պայմանագրերի կնքմանը նախորդել են ՀՀ ֆինանսների նախարարության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի («ՎՋԵԲ») և ՀՀ ֆինանսների նախարարության և Եվրոպական Ներդրումային Բանկի («ԵՆԲ») միջև վարկերի տրամադրման համաձայնագրերի կնքումը՝ Երևան քաղաքի մետրոյի համակարգի վերականգնման ներդրումային ծրագիրն իրականացնելու նպատակով: Համաձայն վարկային համաձայնագրերի՝ ներդրումային ծրագիրն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը պետք է վարկային համաձայնագրերի միևնույն պայմաններով ենթավարկավորի Ընկերությանը բանկերից ստացված ֆոնդերով:

Ներդրումային ծրագիրը բաղկացած է երկու փուլից: Յուրաքանչյուր փուլի համար ՀՀ ֆինանսների նախարարությունը Ընկերությանը ենթավարկավորում է 10,000,000 եվրոյով, որը հավասարաչափ տրամադրվում է ՎՋԵԲ-ի և ԵՆԲ-ի կողմից: 2013թ. ընթացքում վերակառուցման ծրագրի առաջին փուլն ավարտվել է, և ներկայումս ընթանում է երկրորդ փուլը: Երկրորդ փուլի շրջանակներում Ընկերությունն առայժմ միայն ֆինանսավորվել է ՎՋԵԲ-ից ստացված միջոցների հաշվին:

Ընկերությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի 4,007,649 հազար դրամ չօգտագործված փոխառու միջոցներ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 540,980 հազար դրամ), որոնք ենթակա են օգտագործման մինչև 2016թ. ապրիլի 16-ը:

Վարկերի մարումներն իրականացվում են կիսամյակային հավասարաչափ վճարումներով յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին: Տոկոսագումարների հաշվարկի համար կիրառվում է ԵՆԲ-ի համար՝ EURIBOR + 0.75% և ՎՋԵԲ-ի համար՝ EURIBOR + 1% ստացված տարեկան տոկոսադրույք:

Վարկերն ունեն 10-14 տարի մարման ժամկետ և տարեկան 1.21% միջին տոկոսադրույք (2012թ.՝ 1.29% տոկոսադրույք):

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի իրական արժեքը կազմում է 6,872,542 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,694,041 հազար դրամ): Իրական արժեքը հաշվարկվում է՝ զեղչելով դրամական միջոցների հոսքերը 1.52% տոկոսադրույքով (2012թ.՝ 1.49% տոկոսադրույքով):

Վարկերը տրամադրվել են եվրոյով:

Ընկերության տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 25-ում:

10 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ

	<u>2013թ.</u>	<u>2012թ.</u>
Սկզբնական մնացորդ	4,388,572	3,224,801
Ավելացում	498,020	1,362,283
Շահույթում կամ վնասում ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 17)	<u>(265,597)</u>	<u>(198,512)</u>
Վերջնական մնացորդ	<u><u>4,620,995</u></u>	<u><u>4,388,572</u></u>

Ակտիվներին վերաբերող շնորհները Երևանի քաղաքապետարանից և Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային գործիքից ստացված գումարներն են: Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային գործիքի հետ 2010թ. օգոստոսի 22-ին կնքված համաձայնագրի շրջանակներում վերջինս 5,000,000 եվրո պետք է տրամադրեր Ընկերությանը՝ «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցում» ծրագրի շրջանակներում: 2013թ. ընթացքում տրամադրված գումարը կազմել է 1,016,395 եվրո (2012թ.՝ 2,119,717 եվրո):

Շնորհը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստացված հողատարածքները, որոնք հաշվառվում են հողի կադաստրային և իրական արժեքների տարբերությամբ: Շնորհը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ այդ հողատարածքների վրա գտնվող շենքերի մաշվածությանը զուգընթաց:

11 Հետաձգված հարկային պարտավորություններ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	<u>2013թ.</u>	<u>2012թ.</u>
Տարեսկզբի մնացորդ	265,821	195,389
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս (տե՛ս ծանոթագրություն 22)	<u>176,385</u>	<u>70,432</u>
Տարեվերջի մնացորդ	<u><u>442,206</u></u>	<u><u>265,821</u></u>

2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2013թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2013թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Փոխանցվող հարկային վնաս Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,023,292	158,820	1,182,112
	14,714	3,106	17,820
	1,038,006	161,926	1,199,932
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	505,659	214,431	720,090
Հետաձգված հարկային ակտիվի գնահատում	(798,168)	(123,880)	(922,048)
Չուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(265,821)	(176,385)	(442,206)

2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2012թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2012թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Փոխանցվող հարկային վնաս Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	483,423	539,869	1,023,292
	13,726	988	14,714
	497,149	540,857	1,038,006
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	315,468	190,191	505,659
Հետաձգված հարկային ակտիվի գնահատում	(377,070)	(421,098)	(798,168)
Չուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(195,389)	(70,432)	(265,821)

Ներառյալ՝	2013թ.	2012թ.
Մարման ենթակա ավելի քան 12 ամսվա ընթացքում	456,462	280,535
Փոխհատուցման ենթակա 12 ամսվա ընթացքում	(14,256)	(14,714)

12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	65,990	64,861
Ստացված կանխավճարներ	81,084	2,126
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	202,234	199,710
Կրեդիտորական պարտքեր պետական բյուջեին	83,563	11,477
	432,871	278,174

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 1 ամիս (2012թ.՝ 1 ամիս): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Առևտրային կրեդիտորական պարտքերն արտահայտված են հայկական դրամով:

13 Պահուստներ

Ընթացիկ պահուստներն առաջացել են Ընկերության հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով ծախսերի ճանաչման հետևանքով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կատարվել են 2007-2008թթ. և 2009-2010թթ. հարկային ստուգումներ, որի արդյունքում համապատասխանաբար հաշվեգրվել են 240,721 հազար դրամ և 360,935 հազար դրամ լրացուցիչ հարկային պարտավորություններ՝ հիմնականում ԱԱՀ-ի գծով: Նշված լրացուցիչ հարկային պարտավորություններն առաջացել են ԱԱՀ հաշվարկներում Ընկերության կողմից գործող սակագնի կիրառման համար ստացված սուբսիդիայի գումարների հաշվին կատարված ձեռքբերումների ԱԱՀ-ն հաշվանցվելու հետևանքով:

Ընկերության ղեկավարությունը չի ընդունում պետական եկամուտների կոմիտեի նկատմամբ վերոհիշյալ պարտավորությունները և դիմել է ՀՀ վարչական դատարան հարկային մարմինների ստուգման ակտն անվավեր ճանաչելու հայցով: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դատական գործը չի ավարտվել (տե՛ս ծանոթագրություն 28.3):

Ելնելով վերը նշվածի հետ կապված անորոշություններից՝ ղեկավարությունը որոշել է հաշվեգրել նաև 2011թ. և 2012թ. վերաբերող համապատասխան պարտավորության գումարները՝ 388,435 հազար դրամ և 203,080 հազար դրամ գումարի չափով:

14 Հասույթ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուղևորների փոխադրում	1,151,449	1,093,151
Կապի ծառայությունների թույլտվության տրամադրում	141,836	140,235
Վարձակալություն	78,418	70,193
Գովազդի տեղադրման թույլտվության տրամադրում	29,415	26,741
Այլ	2,293	3,100
	1,403,411	1,333,420

15 Պետական աջակցություն

Երևանի մետրոպոլիտենի շարունակական գործունեությունը և պահպանումը ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարությունը սուբսիդիաներ է տրամադրում Ընկերությանը, քանի որ Ընկերության գործունեությունից հասույթը չի ծածկում Ընկերության շահագործման հետ կապված ծախսերը: Սուբսիդիաները տրամադրվում են ինչպես ընթացիկ, այնպես էլ որոշակի չափով կապիտալ ծախսումները ծածկելու նպատակով: Այդ սուբսիդիաները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով:

16 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցում աշխատակիցներին	1,676,018	1,610,469
Մաշվածություն	837,132	572,656
Էլեկտրաէներգիայի ծախս	411,039	345,080
Նյութերի օգտագործում	219,649	118,143
Այլ	357,995	230,800
	<u>3,501,833</u>	<u>2,877,148</u>

17 Այլ եկամուտ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	265,597	198,512
Այլ	4,354	59,421
	<u>269,951</u>	<u>257,933</u>

18 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցում աշխատակիցներին	191,798	176,974
Մաշվածություն	11,034	8,388
Վառելիքի և տրանսպորտային միջոցների սպասարկում	23,123	19,520
Գործուղում	15,414	7,274
Այլ	52,830	52,568
	<u>294,199</u>	<u>264,724</u>

19 Այլ ծախսեր

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հարկեր և տուրքեր	235,023	109,773
Այլ	57,040	139,135
	<u>292,063</u>	<u>248,908</u>

20 Ֆինանսական ծախսեր, զուտ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ՀՀ կառավարությունից ստացված ենթավարկերի գծով տոկոսային ծախսեր	80,310	89,180
Բանկային վարկերի գծով տոկոսային ծախսեր	-	29,598
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	80,310	118,778
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	71	48
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	71	48
Զուտ ֆինանսական ծախսեր	80,239	118,730

21 Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	(181)	(3,696)
	276,436	257,745
	276,255	254,049

22 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	176,385	70,432
	176,385	70,432

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(465,039)		(267,965)	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2012թ.՝ 20%)	(93,008)	20	(53,593)	20
Զնվազեցվող ծախսեր, զուտ Զօգտագործված հարկային վնասներից չճանաչված հետաձգված հարկային ակտիվի ազդեցությունը	393,273	(85)	545,123	(203)
	(123,880)	27	(421,098)	157
Շահութահարկի գծով ծախս	176,385	(38)	70,432	(26)

23 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

23.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը դատողություն է կիրառել հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները որոշելու համար՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են տեխնիկական կամ կոնսերվացիոն անպիտանելիությունը, ակտիվների ակնկալվող օգտագործումը՝ ելնելով ակտիվների ակնկալվող հզորությունից և դրանց ակնկալվող ֆիզիկական մաշվածությունից, որն էլ իր հերթին կախված է գործառնական գործոններից: Չնայած նրան, որ ղեկավարությունը լավագույնս գնահատել է ակտիվներին ներհատուկ հետագա տնտեսական օգուտների սպառումը, դրանք կարող են էականորեն տարբերվել իրական արդյունքներից, որոնք կարող են էապես ազդել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

Հետաձգված հարկային ակտիվի գնահատում

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 2-րդ կետի պահանջների համաձայն նախորդ տարիների գործունեության արդյունքում հարկատուի վնասները կարող են փոխանցվել վնասի ստացման տարվան հաջորդող հինգ տարիներ: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 922,048 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 798,168 հազար դրամ) հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել, քանի որ, ղեկավարության համոզմամբ, Ընկերությունը, ելնելով իր գործունեության բնույթից, ապագայում չի ունենա հարկման ենթակա եկամուտ, որի ծածկման համար կկարողանա օգտագործել շահութահարկի գծով ակտիվները: Եթե ղեկավարության գնահատականն ապագա եկամուտների նկատմամբ լինի ոչ իրատեսական, ապա հետաձգված հարկերի հաշվեկշռային արժեքը կարող է էապես տարբերվել:

24 Ֆինանսական գործիքներ

24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6 -ում:

24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	21,177	13,460
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	304,566	40,328
	<u>325,743</u>	<u>53,788</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր	6,894,041	4,754,808
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	268,224	264,571
	<u>7,162,265</u>	<u>5,019,379</u>

25 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են՝ շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արտարժույթային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի , որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ եվրոյով ստացված վարկերից, որն օգտագործվել է «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցում» ծրագիրը ֆինանսավորելու համար:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>Եվրո</u>
<i>Ֆինանսական ակտիվներ</i>	
Սնացորդներ դրամարկղում և բանկերում	<u>9,124</u>

Ֆինանսական պարտավորություններ

Վարկեր	<u>6,894,041</u>
Ձուտ արդյունք	<u>(6,884,917)</u>

Հոդված

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>Եվրո</u>
<i>Ֆինանսական ակտիվներ</i>	
Սնացորդներ դրամարկղում և բանկերում	<u>6,274</u>

Ֆինանսական պարտավորություններ

Վարկեր	<u>4,754,808</u>
Ձուտ արդյունք	<u>(4,748,534)</u>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը եվրոյի նկատմամբ դրամի 7% (2012թ.՝ 7%) աճին/նվազմանը: 7%-ը (2012թ.՝ 7%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Չզայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 7%-ով (2012թ.՝ 7%):

Դրամի արժևորումը եվրոյի նկատմամբ 7%-ով (2012թ.՝ 7%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	<u>Եվրոյի ազդեցություն</u>	
	<u>2013թ.</u>	<u>2012թ.</u>
Շահույթ կամ վնաս	(481,944)	(332,397)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված եվրոյով վարկերի մնացորդների աճից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ:

Հետևյալ աղյուսակում համադրվում են միջին պայմանագրային և արդյունավետ տոկոսադրույքները՝

2013թ.	Միջին տոկոսադրույք	
	Պայմանագրային	Արդյունավետ
Պարտավորություններ		
<i>Չապահովված վարկեր՝ ՀՀ Կառավարությունից</i>		
Եվրո	1.21%	1.52%
2012թ.	Միջին տոկոսադրույք	
	Պայմանագրային	Արդյունավետ
Պարտավորություններ		
<i>Չապահովված վարկեր՝ ՀՀ Կառավարությունից</i>		
Եվրո	1.29%	1.49%

Ստորև ներկայացված զգայունության վերլուծությունն իրականացվել է տոկոսադրույքի 1%-ի փոփոխության համար: 1%-ը ղեկավարության կողմից գնահատված տոկոսադրույքի հավանական փոփոխությունն է:

Եթե տոկոսադրույքը լիներ 1% բարձր/ցածր, իսկ մյուս փոփոխականները մնային հաստատուն, ապա Ընկերության՝ 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա արդյունքը կնվազեր/կաճեր 62,055 հազար դրամով (2012թ.՝ կնվազեր/կաճեր 71,867 հազար դրամով),

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունն Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր	21,177	13,460
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	304,566	40,328
	<u>325,743</u>	<u>53,788</u>

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Դրամական միջոցների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2013թ.	Գործիքներ փոփոխուն տոկոսադրույքով		Ընդամենը
	Անտոկոս		
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		1.52%	
Մինչև 6 ամիս	268,224	116,571	384,795
6 ամսից մինչև 1 տարի	-	116,571	116,571
1-5 տարի	-	2,328,213	2,328,213
Ավելի քան 5 տարի	-	4,388,639	4,388,639
	<u>268,224</u>	<u>6,949,994</u>	<u>7,218,218</u>
2012թ.	Գործիքներ փոփոխուն տոկոսադրույքով		Ընդամենը
	Անտոկոս		
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		1.49%	
Մինչև 6 ամիս	264,571	110,883	375,454
6 ամսից մինչև 1 տարի	-	110,883	110,883
1-5 տարի	-	1,520,676	1,520,676
Ավելի քան 5 տարի	-	3,041,358	3,041,358
	<u>264,571</u>	<u>4,783,800</u>	<u>5,048,371</u>

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: Շարունակական գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարությունը սուբսիդիաներ է հատկացնում Ընկերությանը՝ ընթացիկ դրամական արտահոսքերն ապահովելու համար, ներառյալ վարկերի մայր գումարի և տոկոսների մարման համար:

26 Իրական արժեքի չափում

Ընկերությունը դասակարգում է կատարում 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվների և պարտավորությունների համար, ինչպես նաև այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնց իրական արժեքները բացահայտվում են՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են մնանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կա'ն ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կա'ն անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

26.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը

Գեկավարությունը հավատացած է, որ, բացառությամբ վարկերի, ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքը որոշվում է՝ համապատասխան դրամական հոսքերը գեղչելով մնանատիպ գործիքների համար կիրառվող շուկայական տոկոսադրույքով: Այս դեպքում ամենագագալի փոփոխականը գեղչման տոկոսադրույքն է: Վերը նշված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

27 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը ու կուտակված վնասը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերը, որոնք բացահայտված են ծանոթագրություն 9-ում:

Գեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող բաժնեմասի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր, կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները ստուգվող հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	2,567,704	3,209,128
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(304,566)	(40,328)
Կապիտալ	2,263,138	3,168,800
Ընդհանուր սեփական կապիտալ	2,567,704	3,209,128
Վարկեր	6,894,041	4,754,808
Ընդհանուր ֆինանսավորում	9,461,745	7,963,936
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.3	0.4

Հարաբերակցության փոփոխությունը հիմնականում պայմանավորված է ֆինանսավորման նպատակով ստացված վարկերի ավելացումով և Ընկերության կրած վնասներով:

28 Պարտավորվածություններ

28.1 Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում Ընկերությունը կնքել է մի շարք միջազգային պայմանագրեր՝ «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցում» ծրագիրն իրականացնելու համար: Ծրագիրը բաղկացած է 2 փուլից՝ յուրաքանչյուրը 15 մլն եվրո: Առաջին փուլն արդեն իսկ ավարտված է, իսկ երկրորդ փուլի շրջանակներում Ընկերությունը ստանձնել է պարտավորություն՝ ձեռք բերելու 6,805,349 հազար դրամի (12,162,400 եվրոյի) հիմնական միջոցներ և կատարել կապիտալ վերանորոգումներ:

28.2 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

Ընկերությունը՝ որպես վարձատու

Մետրոյին հարակից տարածքները գործառնական վարձակալությամբ տրվել են միջինը 8 տարով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով ստանալիք վարձավճարները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	65,576	52,523
1 - 5 տարի	211,689	152,483
Ավելի քան 5 տարի	653,857	527,495
	931,122	732,501

28.3 Իրավական պարտավորվածություններ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 13-ում, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կատարվել են 2007-2008թթ. և 2009-2010թթ. հարկային ստուգումներ, որոնց

արդյունքում հաշվեգրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ: Նշված լրացուցիչ հարկային պարտավորություններն առաջացել են ԱԱՀ հաշվարկներում Ընկերության կողմից գործող սակագնի կիրառման համար ստացված սուբսիդիայի գումարների հաշվին կատարված ձեռքբերումների ԱԱՀ-ն հաշվանցելու հետևանքով:

Ընկերության ղեկավարությունը համաձայն չէ նշված պարտավորության հետ, քանի որ իր համոզմամբ՝ Ընկերությունը պատշաճ ձևով հաշվարկել է բոլոր հարկային պարտավորությունները: Ընկերությունը դիմել է ՀՀ վարչական դատարան հարկային մարմինների ակտն անվավեր ճանաչելու հայցով և շահել դատը: Բանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն բողոքարկել է վերոհիշյալ վարչական դատարանի վճիռը, ինչի արդյունքում նշված դատական գործը նորից ուղարկվել է ՀՀ վարչական դատարան քննության, Ընկերությունը ֆինանսական հաշվետվություններում վերը նշված պարտավորությունն արտացոլելու համար ձևավորվել է պահուստ (տե՛ս ծանոթագրություն 13):

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության և ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջև դատական վեճը դեռ չի ավարտվել:

29 Պայմանականություններ

29.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել ծառայությունների մատուցման, ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված ռիսկերի վերաբերյալ և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

29.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

29.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

29.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Դեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

30 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են բաժնետիրոջը և հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև: Քանի որ Ընկերության բաժնետերն է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Ընկերության կապակցված կողմեր են համարվում նաև այլ պետական ձեռնարկություններ:

30.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի կողմից:

30.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
<i>Բաժնետեր</i>		
Շնորհի տրամադրում	-	200,000
Սուբսիդիայի տրամադրում	2,306,188	1,904,241
Տոկոսային ծախսի հաշվեգրում	80,310	89,180
Վարկերի մայր գումարի մարում	225,699	-
Հաշվեգրված տոկոսների մարում	80,310	89,180
<i>Ղեկավարություն և նրանց անմիջական ազգականներ</i>		
Աշխատավարձ և այլ վճարներ	11,710	11,579
Հազար դրամ		
Մնացորդներ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Բաժնետեր</i>		
Ակտիվներին վերաբերող շնորհներ	2,205,848	2,389,745
Վարկեր	6,894,041	4,754,808
<i>Ղեկավարություն և նրանց անմիջական ազգականներ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	718	648

31 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2013թ. ընթացքում Ընկերությունը որոշեց վերաներկայացնել 2012թ. և 2011թ. ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ նախորդ տարիներին վերաբերող սխալի բացահայտման հետևանքով: Հայտնաբերված սխալները ներկայացված են ստորև.

Աշխատակիցների կողմից չօգտագործված արձակուրդային օրերի հաշվեգրում

Ընկերությունը նախկինում չի հաշվեգրել պարտավորություններ՝ աշխատակիցների չօգտագործված արձակուրդային օրերի գծով: Աշխատակիցներին կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունների գծով ծախսը և համապատասխան պարտավորությունը պետք է ճանաչվեր այն ժամանակ, երբ աշխատակիցները ձեռք են բերել արձակուրդի իրավունքը, ինչը պահանջվում է ՀՀՄ 19 «Աշխատակիցների հատուցումներ» ստանդարտով: Ընթացիկ տարում Ընկերության ղեկավարությունը որոշել է ուղղել այդ սխալը հետընթաց և 2012թ. և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեգրել է համապատասխանաբար՝ 76,108 հազար դրամ և 72,168 հազար դրամի պարտավորություններ աշխատակիցների գծով, որոնք ներառված են «Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր» տողում:

Հողեր

Ընթացիկ տարում Ընկերությունը բացահայտել է, որ առկա են հողեր, որոնք սեփականության իրավունքով պատկանել են Ընկերությանը, սակայն հաշվառված չեն եղել Ընկերության ֆինանսական հաշվետվություններում: Հողերը Ընկերությանը փոխանցվել են ՀՀ Կառավարության և Երևանի քաղաքապետարանի որոշումների հիման վրա 2006 և 2009 թվականներին: Համաձայն այդ որոշումների Ընկերությունը որպես շնորհ ստացված հողերը պետք է ձևակերպեր դրանց կադաստրային և իրական արժեքների տարբերությամբ: Ընկերությունը կատարել է ուղղումները հետընթաց և 2012թ. և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ձևակերպել է 511,009 հազար դրամի հողեր, որոնք ներառվել են «Հողեր, շենքեր, շինություններ» դասում: Համապատասխանաբար փոփոխության են ենթարկվել նաև ակտիվներին վերաբերող շնորհը և կուտակված վնասը:

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհների մնացորդում Ընկերությունն ունեցել է նախորդ տարիներից կուտակված մնացորդ, որը պետք է ձևակերպվեր որպես եկամտունենին վերաբերող շնորհ և եկամտագրվեր համապատասխան տարում, ինչը սակայն չի արվել: Արդյունքում Ընկերության ղեկավարությունը կատարել է համապատասխան ուղղումը՝ ճշգրտելով շնորհի մնացորդը 171,913 հազար դրամով ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում:

Ի լրումն, Ընկերությունն արտարժույթով ստացված շնորհը հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատել էր տարվա վերջի փոխարժեքով, ինչը հակասում է ՀՀՄ 21 «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ստանդարտի պահանջներին, քանի որ ոչ դրամային հողվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը): Արդյունքում 2012թ. ֆինանսական հաշվետվություններում ճանաչված 41,071 հազար դրամ վերագնահատումից վնասը հակադարձվել է:

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական հաշվետվություններում չի ներառվել հիմնական միջոցների համար մատակարարին փոխանցված կանխավճարը, որի կեսը շնորհի տեսքով տրամադրվել է Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային Գործիքի կողմից՝ 96,096 հազար դրամ գումարով:

Հետաձգված հարկեր

Ընկերությունը նախկինում չի հաշվեգրել և չի ձևակերպել հետաձգված հարկեր, ինչպես պահանջվում է ՀՀՄ 12 *Շահութահարկ* ստանդարտով: Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Ընթացիկ տարում Ընկերությունը որոշել է կատարել ուղղումը հետընթաց և 2012թ. և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեգրել է համապատասխանաբար՝ 265,821 հազար դրամ և 195,389 հազար դրամ հետաձգված հարկային պարտավորություններ:

Վարկեր

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական հաշվետվություններում չի ներառվել հիմնական միջոցների համար մատակարարին փոխանցված կանխավճարը, որի կեսը վարկի տեսքով տրամադրվել է Եվրոպական Ներդրումային բանկի կողմից՝ 96,096 հազար դրամ գումարով:

Բացի դրանից, Ընկերությունը չէր վերագնահատել 2011թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի մնացորդները, ինչը հակասում է ՀՀՄ 21 *«Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները»* ստանդարտի պահանջներին, քանի որ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Արդյունքում 2011թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի մնացորդը նվազել է համապատասխանաբար 117,366 հազար դրամով և աճել է 2,380 հազար դրամով:

Մնացած ճշգրտումներն իրենցից ներկայացնում են վերադասակարգումներ:

Վերը նշվածի արդյունքում Ընկերության ղեկավարությունը որոշեց կատարել համապատասխան ուղղումներ այս ֆինանսական հաշվետվություններում, որոնք կատարվեցին հետընթաց՝ համաձայն Ընկերության որդեգրած քաղաքականության (տե՛ս ծանոթագրություն 2.6):

Հազար դրամ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Գշգրտում	Գշգրտված մնացորդ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	12,437,455	511,009	12,948,464
Ոչ նյութական ակտիվներ	177	-	177
Նվազագույն շահութահարկի վճարներ	28,714	-	28,714
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ծեռքերման համար	35,529	192,192	227,721
	12,501,875	703,201	13,205,076
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	377,154	-	377,154
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	232,094	-	232,094
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	40,328	-	40,328
	649,576	-	649,576
Ընդամենը ակտիվներ	13,151,451	703,201	13,854,652
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	4,202,243	-	4,202,243
Կուտակված վնաս	(790,937)	(202,178)	(993,115)
	3,411,306	(202,178)	3,209,128
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր	4,683,593	(150,551)	4,533,042
Ակտիվներին վերաբերող շնորհներ	4,006,110	382,462	4,388,572
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	265,821	265,821
	8,689,703	497,732	9,187,435
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր	-	221,766	221,766
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	202,066	76,108	278,174
Պահուստներ	848,376	109,773	958,149
	1,050,442	407,647	1,458,089
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	13,151,451	703,201	13,854,652

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ծշգրտում	Ծշգրտված մնացորդ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	10,702,396	511,009	11,213,405
Ոչ նյութական ակտիվներ	278	-	278
Նվազագույն շահութահարկի վճարներ	23,871	-	23,871
	<u>10,726,545</u>	<u>511,009</u>	<u>11,237,554</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	228,075	-	228,075
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	308,170	-	308,170
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7,341	-	7,341
	<u>543,586</u>	<u>-</u>	<u>543,586</u>
Ընդամենը ակտիվներ	<u>11,270,131</u>	<u>511,009</u>	<u>11,781,140</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	4,202,243	-	4,202,243
Կուտակված վնաս	(704,077)	49,359	(654,718)
	<u>3,498,166</u>	<u>49,359</u>	<u>3,547,525</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր	3,515,575	(117,366)	3,398,209
Ակտիվներին վերաբերող շնորհներ	2,913,342	311,459	3,224,801
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	195,389	195,389
	<u>6,428,917</u>	<u>389,482</u>	<u>6,818,399</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր	274,626	-	274,626
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	220,046	72,168	292,214
Պահուստներ	848,376	-	848,376
	<u>1,343,048</u>	<u>72,168</u>	<u>1,415,216</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	<u>11,270,131</u>	<u>511,009</u>	<u>11,781,140</u>

Տարվա վնասի ճշգրտումների մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Այլ եկամուտ	6,523	6,523
Վաճառքի ինքնաթեք	(2,850)	(63,126)
Վարչական ծախսեր	(1,090)	(9,042)
Այլ ծախսեր	(109,773)	-
Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	(73,915)	117,366
Շահութահարկի գծով ծախս	(70,432)	(195,389)
	<u>(251,537)</u>	<u>(143,668)</u>



Grant Thornton

www.grantthornton.am